

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ	3
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ.....	3
ՄԱՍ 1. 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	9
ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	11
ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	29
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	40

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն տարեկան հաղորդումը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 198-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, ինչպես նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի և 28-րդ հոդվածի պահանջների: Այն պատրաստվել է Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) հիմնարար սկզբունքները սահմանող Լիմայի հռչակագրի հաշվետվողության սկզբունքների հիման վրա:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՅ

Հաշվեքննիչ պալատը 2023 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացրել է 54 հաշվեքննություն, որից 40-ը՝ Հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում (2023 թվականի պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննություններ), 12-ը՝ գործունեության ծրագրի երկրորդ մասի՝ ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ հաստատված հաշվեքննությունների շրջանակներում, իսկ 2-ը՝ գործունեության ծրագրի երրորդ մասի՝ միջազգային պայմանագրերով նախատեսված համատեղ միջոցառումների շրջանակներում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով Հաշվեքննիչ պալատը 2023 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու նպատակով իրականացրել է 40 հաշվեքննություն 10 բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի նկատմամբ:

Քանի որ ՀՀ Սահմանադրության և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությունների արդյունքներն ամփոփող հաշվետու տարվա եզրակացությունը, որպես ինքնուրույն փաստաթուղթ, ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովին և հրապարակվում է Հաշվեքննիչ պալատի www.armsai.am կայքում առանձին ժամանակացույցով, սույն տարեկան հաղորդումը այն չի ներառում: Միաժամանակ, «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սույն տարեկան հաղորդման Մաս 1-ում ներառված է 2022 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության ծրագրի երկրորդ մասի շրջանակներում (ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ) նախատեսված 14 հաշվեքննություններից 12-ը իրականացվել և հաշվեքննության արդյունքները հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում, իսկ 2 ծրագրային կետերով սահմանված հաշվեքննություններ ուժը կորցրել են գործունեության ծրագրի մեջ փոփոխություններ կատարելու հիմքով (ցանկը՝ Հավելված 1-ում): Հաշվետու ժամանակահատվածում, մեթոդաբանությամբ սահմանված պարբերականությամբ, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության շրջանակում ընդգրկվել են, ըստ ֆինանսավորման գումարի չափի, բարձր, միջին և ցածր ռիսկայնության խմբերի հաշվեքննության օբյեկտներ: Կատարողականի հաշվեքննությունների շրջանակը ներառել է տնտեսման, ծախսային և նպատակային արդյունավետության առումով նշանակալի ոլորտներ՝ հաշվի առնելով Հաշվեքննիչ պալատի ռեսուրսները (կարողությունները):

Հաշվեքննությունների արդյունքների հաղորդակցություն: Հաշվեքննիչ պալատի 2023 թվականի Ծրագրի 2-րդ մասով նախատեսված 12 հաշվեքննությունների արդյունքներն արտացոլվել են Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված ընթացիկ եզրակացություններում: Վերջիններս սահմանված կարգով ներկայացվել են Ազգային ժողով, Կառավարություն և համապատասխան հաշվեքննության օբյեկտներին:

Բացի այդ, ընթացիկ եզրակացությունները հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական www.armsai.am և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում (հրապարակված հաշվեքննությունների ամփոփ արդյունքները ներկայացված են սույն հաղորդման Մաս 2-ում):

ՀՀ Ազգային ժողովի հետ հաղորդակցություն: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների արդյունքները, դրանց հանրային նշանակությունից կախված, քննարկման առարկա են դարձել ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և կոնկրետ հաշվեքննության թեմայի գլխադասային մշտական հանձնաժողովի հրավիրած համատեղ նիստերում: Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի՝ Հաշվեքննիչ պալատի իրավական բարելավման նախաձեռնության շրջանակներում գործընթացներին ակտիվորեն ներգրավված է եղել Հաշվեքննիչ պալատը:

Իրավապահ մարմինների հետ հաղորդակցություն: Հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատի հրապարակած հաշվեքննությունների արդյունքների շրջանակներում 8 առանձին ուղղություններով նախաձեռնվել է քրեական վարույթ, որոնցից 6-ը գտնվում են նախաքննություն ընթացքում, իսկ 2-ը կարճվել են:

Նախորդ տարիների հաշվեքննություններով հաշվետու տարում՝ ընթացքում գտնվող քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասի նախնական չափը, ըստ ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, կազմում է 548,126 հազ. դրամ, կատարվում է նախաքննություն:

Իրավապահ մարմինների հետ հաշվետու տարվա համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հաղորդման Հավելված 2-ում:

Հաշվեքննության կարծիքներ և եզրակացություններ: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրի 2-րդ մասում ներառված կետերի համար կիրառվել են հաշվեքննության «ֆինանսական», «համապատասխանության» և «կատարողականի» տեսակները, 4 հաշվեքննության դեպքում՝ համակցվել են ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունները: Իրականացված հաշվեքննությունների տեսակների վիճակագրությունը ներկայացվում է ստորև.

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<i>Ֆինանսական և համապատասխանության</i>	4
<i>Ֆինանսական</i>	1
<i>Կատարողականի</i>	7

Հաշվեքննության առաջադրանքներն իրականացնելիս հաշվեքննողները կիրառել են հաշվեքննության համար նախատեսված բոլոր ընթացակարգերը:

Գործող օրենսդրության համաձայն՝ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների արդյունքներով Հաշվեքննիչ պալատը ներկայացնում է հաշվեքննության կարծիքների հետևյալ տեսակները.

- դրական եզրահանգում, եթե ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար, և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել,
- ոչ լիարժեք եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են, կամ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար,

- բացասական եզրահանգում, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և հաշվետվություններն էականորեն խեղաթյուրված են,
- հրաժարում եզրահանգում ներկայացնելուց, եթե հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած են, և անհնար է ստանալ բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրված հաշվեքննության կարծիքների վիճակագրությունը հետևյալն է.

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դրական եզրահանգում	0
Ոչ լիարժեք եզրահանգում	4
Բացասական եզրահանգում	1
Հրաժարում եզրահանգում ներկայացնելուց	0

Հաշվեքննիչ պալատը կատարողականի հաշվեքննություններով ներկայացնում է կատարողականի հաշվեքննության սկզբունքների պահպանման վերաբերյալ հաշվետվություններ: Կատարողականի հաշվեքննության սկզբունքներն են (3E-երը)՝

- տնտեսումը (economy), որով գնահատվում է, թե ինչքանով են նվազագույնի հասցվել նախատեսված (ձեռք բերվող) ռեսուրսներին ուղղված ծախսերը՝ սահմանված ժամկետի, որակի, քանակի, ծավալի պահպանմամբ և համարժեք հատուցմամբ.
- նպատակային արդյունավետությունը (օգտավետություն, effectiveness), որով գնահատվում են սահմանված նպատակների իրականացումը և պլանավորված արդյունքների ստացումը.
- ծախսային արդյունավետությունը (արդյունավետություն, efficiency), որով գնահատվում է նախատեսված ռեսուրսների օգտագործմամբ համապատասխան որակով, քանակով և ժամկետում առավելագույն արդյունքների ստացումը:

2023 թվականի կատարողականի հաշվեքննության հաշվետվություններում ներկայացված կատարողականի հաշվեքննության սկզբունքների չպահպանման ամփոփիչ դեպքերը ներկայացված են ստորև.

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ ԸՍՏ ՅԵ-ԵՐԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ՉՊԱՀՊԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ

	<i>Տնտեսման</i>	0
	<i>Նպատակային արդյունավետության</i>	4
	<i>Ծախսային արդյունավետության</i>	1

Հաշվեքննությամբ ներկայացված առաջարկություններ: Բացահայտված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների և ռիսկեր պարունակող դեպքերի վերացման և կանխարգելման, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացման համար ՀՀ կառավարությանը, հաշվեքննության և ստուգման օբյեկտներին, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններին ներկայացվել են 59 առաջարկություններ, որոնք բնութագրական հատկանիշներով կարելի է բաժանել երեք տեսակի.

- համակարգին միտված առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարձրացնելու կառավարման, ֆինանսական, իրավական համակարգերի գործունեության արդյունավետությունը,
- արդյունքին միտված առաջարկություններ, որոնք նպատակ են հետապնդում բարելավելու ծրագրերը և ծառայությունները նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելու համար,
- խնդրին (խնդիրների բացահայտմանը և լուծմանը) միտված առաջարկություններ, որոնց նպատակը հաշվեքննության արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերացումն է կամ շտկումը, ինչպես նաև տնտեսման, ծախսային և նպատակային սկզբունքների չպահպանման հետ կապված խնդիրների լուծումը:

Հաշվեքննությունների արդյունքում ներկայացված առաջարկությունների վիճակագրությունը հետևյալն է.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

	<i>Համակարգին միտված</i>	22
	<i>Արդյունքին միտված</i>	17

Հաշվեքննության գործիքակազմ: Տարեկան հաղորդման մեջ ներկայացված բոլոր հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները կազմվել են՝ հիմք ընդունելով հաշվեքննության ընթացքում հաշվեքննողների կողմից կազմված հաշվեքննության (ստուգման) արդյունքների վերաբերյալ արձանագրությունները: Դրանք, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, ներկայացվել են հաշվեքննության (ստուգման) օբյեկտների ղեկավարներին: Վերջիններիս կողմից ներկայացվել են առարկություններ և բացատրություններ: Առարկությունները որոշ դեպքերում իրենց բնույթով եղել են մեկնաբանություններ և բացատրություններ արձանագրված փաստերի վերաբերյալ:

Հաշվեքննողների գործողությունները հաշվեքննության (ստուգման) օբյեկտների կողմից չեն բողոքարկվել: Հաշվեքննության ընթացքում հաշվեքննողները ղեկավարվել են հաշվեքննության իրականացման համար «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, միաժամանակ, կիրառելով Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային ստանդարտներով նախատեսված հաշվեքննության գիտելիքներ: Հաշվեքննությունների ողջ գործընթացը, համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հաշվեքննողների կողմից փաստաթղթավորվել է: Հաշվեքննության արդյունքները մշակվել են անաչառ և համակողմանի տեղեկատվության և փաստերի հիման վրա: Տրված բոլոր գնահատականները հիմնված են պատշաճ ապացույցների վրա: Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ընթացքում հետևել է օրենքով սահմանված գործունեության սկզբունքներին:

Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունները և դրանց հիման վրա մշակված սույն հաղորդումը հաշվեքննությունների արդյունքներով բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում, ինչպես նաև դրանց հետևանքների առնչությամբ կանխատեսում չեն պարունակում:

ՄԱՍ 1. 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատը ֆինանսական և համապատասխանության եռամսյակային հաշվեքննություններ է իրականացրել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ: Հաշվեքննությունների արդյունքների հիման վրա Հաշվեքննիչ պալատը պատրաստել է 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացություն՝ տալով հաշվեքննության կարծիք:


«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» եզրակացությունը հաստատվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2023 թվականի մայիսի 24-ի թիվ 81-Լ որոշմամբ: Հաշվեքննիչ պալատը եզրակացությունը մշակել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեխանիզմով՝ հիմնվելով եռամսյակային հաշվեքննությունների արդյունքների վրա: Մասնավորապես, 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության կազմման նպատակով Հաշվեքննիչ պալատն իրականացրել է 40 հաշվեքննություն 10 գերատեսչություններում: Հաշվեքննությունների արդյունքներն ամփոփված են ընթացիկ եզրակացություններում, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, հաշվեքննության օբյեկտներին, ինչպես նաև հրապարակվել Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում (օրենքով սահմանված կարգով գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող 4 ընթացիկ եզրակացությունները կայքում հրապարակված չեն):

Վերոնշյալ 10 գերատեսչություններում իրականացված հաշվեքննությունների արդյունքում արձանագրվել են 113 անհամապատասխանություն: Միևնույն ժամանակ, 5 գերատեսչությունում արձանագրվել է 18 խեղաթյուրում, որոնց ընդհանուր գումարը կազմել է 2,134.3 մլն դրամ կամ հաշվեքննված գերատեսչությունների տարեկան փաստացի ծախսերի 0.11%-ը:

Արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում, ինչպես նաև երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններում, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում՝ բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող ընթացիկ եզրակացությունների: ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությունների արդյունքում ներկայացվել է թվով 54 առաջարկություն 10 գերատեսչությունների կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ:

Հաշվեքննիչ պալատը, հաշվեքննության ենթարկելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված

գործունեությունը, ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ արտահայտել է **դրական եզրահանգում**:


<p>Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացություն</p>	<p>Հղում</p>
	

ՄԱՍ 2. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատի 2023 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասով իրականացված հաշվեքննությունների բոլոր մանրամասները ներկայացված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում հրապարակված ընթացիկ եզրակացություններում: Ընթացիկ եզրակացությունների վերաբերյալ համառոտ ամփոփագրերը ներկայացված են «2.1 Ընթացիկ եզրակացությունների ամփոփագրեր» ենթաբաժնում, իսկ հաշվեքննությունների հիմնական արդյունքներից օրինակներն ամփոփված են «2.2 հիմնական արդյունքներ» ենթաբաժնում:


2.1 ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ քաղաքաշինության կոմիտե		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի հունվարի 23-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Ֆինանսատնտեսական գործունեություն	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	4
Հաշվեքննության կարծիք		հղում
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» ¹ կարծիք:		


¹ Հաշվեքննության կարծիքների սահմանումները ներկայացված են 5-րդ էջում

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ**


Հաշվեքննության օբյեկտը		
Գեղարքունիքի մարզպետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2023 թվականի փետրվարի 1-ից 2023 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ		2022 թվականի հունվարի 1-ից 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ֆինանսատնտեսական գործունեություն		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	3	3
Հաշվեքննության կարծիք		հղում
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը		
Շիրակի մարզպետարան		
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը		2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Ֆինանսատնտեսական գործունեություն		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	1


Հաշվեքննության կարծիք	հղում
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:	

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ


Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի մարտի 2-ից հունիսի 28-ը	2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Ֆինանսատնտեսական գործունեություն	Ֆինանսական հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	1
Հաշվեքննության կարծիք		հղում
Հաշվեքննությամբ տրվել է «ոչ լիարժեք եզրահանգում» կարծիք:		

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննության օբյեկտը	
Արտաշատի համայնքապետարան	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը


Ֆինանսատնտեսական գործունեություն		Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
4	2	3	
Հաշվեքննության կարծիք			հղում
Հաշվեքննությամբ տրվել է «բացասական եզրահանգում» կարծիք:			

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը			
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության			
Հաշվեքննության կատարման ժամկետը		Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի փետրվարի 3-ից մինչև 2024 թվականի մարտի 11-ը		2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Կոշտ թափոնների կառավարման գործընթաց		Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ	
3	2	1	
Համառոտ եզրակացություն			հղում
Չեն պահպանվել ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքները ²			

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

² Կատարողականի հաշվեքննության սկզբունքների սահմանումները ներկայացված են 6-րդ էջում

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ պետական եկամուտների կոմիտե		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի փետրվարի 3-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկման գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	2	1
Հղումը՝ 		

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ ներքին գործերի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի հունիսի 25-ից մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Սեյսմիկ պաշտպանության գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
6	1	-
Համառոտ եզրակացություն		հղում

Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը




ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑ


Հաշվեքննության օբյեկտներ		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2022թ. հունիսի 1-ից մինչև 2024թ. փետրվարի 29-ը	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Զբաղվածության ծրագրի իրականացման գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
2	2	1
Համառոտ եզրակացություն		հղում
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը		

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ


Հաշվեքննության օբյեկտը	
ՀՀ առողջապահության նախարարություն	
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը
2021 թվականի մարտի 5-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը

Հաշվեքննության առարկան		Հաշվեքննության մեթոդաբանությունը
Մոր և մանկան առողջության պահպանում		Կատարողականի հաշվեքննություն
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	-	2
Հղում՝ 		

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի մարտի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը	2020 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Չափագիտության զարգացման ծրագրի իրականացման գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
-	2	2
Համառոտ եզրակացություն		հղում
Չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը		

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հաշվեքննության օբյեկտը		
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
Հաշվեքննության կատարման ժամկետը	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	
2023 թվականի մարտի 1-ից 2024 թվականի փետրվարի 29-ը ներառյալ	2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ը	
Հաշվեքննության առարկան	Հաշվեքննության մեթոդաբանությունը	
Արտադրական հնարավորությունների արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներմուծման խթանման նպատակով մատչելի պայմաններով վարկերի տրամադրման գործընթաց	Կատարողականի հաշվեքննություն	
Համակարգին միտված առաջարկություններ	Արդյունքին միտված առաջարկություններ	Խնդիրներին միտված առաջարկություններ
1	1	1
<p>Հղում՝</p> 		

2.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Անհամապատասխանությունների օրինակներ

➤ 2022 թվականին գործող 57 Կապալի (շինարարության) պայմանագրերով, պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացություններում չեն նշվել կատարված աշխատանքների անվանումները, տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը և ծավալը, փոխարենը «քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի» և «քանակական ցուցանիշը փաստացի» բաժիններում լրացվել են Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված գումարներ: Այդ աշխատանքների որակի տեխնիկական հսկողության պայմանագրերի շրջանակներում կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացություններում չեն նշվել այդ

պայմանագրերի տեխնիկական առաջադրանքով պատվիրված ծառայությունները կամ գործառույթները:

➤ Տեխնիկական հսկողության 34 պայմանագրով փաստաթղթեր ստորագրած որոշ մասնագետ-հսկիչներ չեն հանդիսացել պատասխանատու անձ, կամ չեն հանդիսացել տվյալ էտորհրդատուի աշխատող, իսկ որոշ դեպքերում մասնագետ-հսկիչները միաժամանակ՝ ամենօրյա ռեժիմով, ծառայություն են մատուցել տարբեր համայնքներում գտնվող շիրնարարական օբյեկտներում, որը գործնականում հնարավոր չէր:

➤ Քաղաքաշինության բնագավառի գործունեության շինարարության իրականացման և շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզիայի ներդիրի ստացման համար 2022 թվականին 324 դեպքից 178-ով ներկայացրած փաստաթղթերի թերի լինելու և Հայաստանի Հանրապետության կառավարության կարգով սահմանված պահանջներին չհամապատասխանալու պարագայում լիցենզիաների ներդիրների տրամադրումը չի մերժվել:

Խեղաթյուրումների օրինակներ

➤ Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման 38 պայմանագրերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերով չեն նախատեսվել ծառայությունների մատուցման առանձին փուլեր (ծառայությունների փուլային ձևով մատուցում նախատեսված չէ նաև համապատասխան գնման ընթացակարգի հրավերներով) և այն դիտարկվել է որպես «1» ամբողջական ծառայության մատուցում, որի ժամկետը սահմանվել է շինմոնտաժային աշխատանքների ավարտը, սակայն Կատարողները մինչև շինմոնտաժային աշխատանքների ավարտը պարբերաբար ներկայացրել են հանձնման-ընդունման արձանագրություններ՝ գումարով ընդամենը 379,830.26 հազար դրամի, որոնց համար 2022 թվականի ընթացքում, պարբերաբար, վճարվել է ընդամենը 314,643.95 հազար դրամ:

➤ Շինարարության կապալի 21 պայմանագրերի համապատասխան համաձայնագրով 2022 թվականի համար սահմանված (փոփոխված) օրացուցային գրաֆիկներով նախատեսված ժամկետում նույն գրաֆիկներով նախատեսված ծավալը (կատարվելիք աշխատանքների գումարային մեծությունը) չի կատարվել, իսկ 4 Կապալի պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման ընդհանուր ժամկետը ավարտվել է, սակայն Կապալառուների կողմից աշխատանքներն ամբողջությամբ չեն կատարվել, ինչի արդյունքում, Կապալառուներից ենթակա է գանձման 142,216.85 հազար դրամ տույժ:

➤ Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման 20 պայմանագրերով ամենամսյա հաշվետվությունները ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ կամ չեն ներկայացվել, ինչի համար կատարողներից ենթակա է գանձման 127,682.71 հազար դրամ տույժ և տուգանք:

2. ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքնությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Խեղաթյուրումների օրինակներ

➤ Ծառայության 2022թ. բյուջեի «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային ապահովում» ծախսային միջոցառման իրականացման ժամանակ որոշ գործընթացներ կատարվել են սահմանված ժամկետի ուշացումով, պայմանագիր կնքելու առաջարկն արվել է հեռախոսակապի միջոցով՝ գրավոր ծանուցման փոխարեն, առկա չէ տեղեկատվություն մամուլում հրապարակված լինելու վերաբերյալ: 2022թ. բնակարանների գնման վկայագրերի (այսուհետ՝ ԲԳՎ) տրամադրման հարցերով հանձնաժողովի նիստեր չեն գումարվել, նախարարի կողմից աջակցություն ստացող անձանց վերջնական ցուցակներ չեն հաստատվել, «ԲԳՎ-ի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար աջակցություն ստանալու մասին» պայմանագրեր չեն կնքվել, ԲԳՎ-ներ չեն տրամադրվել, նոտարների անվամբ առկա դեպոզիտային հաշիվներին փոխանցված գումարաչափերը որոշվել են շահառուների սկզբնական ցուցակների հիման վրա և հաշվետու տարվա վերջի դրությամբ առկա են որպես հաշիվներում չծախսված մնացորդ: Նշված ծախսային միջոցառման կատարողականում զրոյական ցուցանիշի պայմաններում ձևակերպված 824,959.50 հազ. դրամի փաստացի ծախսը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանի դրույթներին:

3. Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքնությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Անհամապատասխանությունների օրինակներ

➤ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 463-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն համայնքների կողմից հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ է սահմանվել 2018 թվականի հունվարի 1-ը: Համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին

համապատասխան հաշվապահական հաշվառում չի վարվել: Արձանագրվել է անհամապատասխանություն «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման նկատմամբ:

➤ 2022 թվականի ընթացքում Համայնքապետարանում ներքին աուդիտի համակարգը չի գործել՝ առկա չէ համապատասխան ստորաբաժանում և աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով նույնպես Համայնքի բյուջեի կատարումն աուդիտի չի ենթարկվել: Արձանագրվել է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների նկատմամբ:

➤ Վարձակալության հանձնված հողերի հաշվառման վերաբերյալ տվյալների միասնական բազա առկա չէ: Համայնքի գյուղական բնակավայրերում հողի վարձավճարների գծով պայմանագրերով սահմանված տույժերը չեն գանձվել: Արձանագրվել է անհամապատասխանություն, հողամասերը վարձակալության հանձնելու մասին պայմանագրերով «Տույժեր և տուգանքներ» բաժնի դրույթներով սահմանված պահանջների նկատմամբ, այն է. «Վարձակալը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով»:

Խեղաթյուրման օրինակ

➤ Համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան կատարման հաշվետվությամբ մի շարք ցուցանիշներ հաստատվել և հրապարակվել են դրանց փաստացի ցուցանիշների նկատմամբ էական անհամապատասխանություններով, ըստ այդմ, հաշվետվությունում մի շարք եկամտատեսակներ ներկայացված են 189,604.3 հազ. դրամի չափով ավելի և առանձին եկամտատեսակներ՝ 89,363.3 հազ. դրամով պակաս: Ծախսերի հաշվետվության տվյալների անհամապատասխանությունը փաստացի ցուցանիշների նկատմամբ կազմել է 493,762.95 հազ. դրամ: Առկա է անհամապատասխանություն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պահանջների նկատմամբ: Արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են Արտաշատ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունների խեղաթյուրման՝ ծախսերի կատարման մասով՝ 493,762.95 հազ. դրամի չափով, եկամուտների կատարման հաշվետվության ցուցանիշների մասով, ըստ առանձին եկամտատեսակների, 189,604.3 հազ.դրամ և 89,363.3 հազ. դրամի չափերով:

4. Շիրակի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքնությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Խեղաթյուրման օրինակ

➤ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակում 2022 թվականի տարեվերջին, առանց կատարողական ակտեր ընդունելու և հանձնման ընդունման արձանագրություններ կազմելու, Շիրակի մարզպետարանը կապալառուների, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից դուրս գրված հարկային հաշիվների հիման վրա նշված բոլոր պայմանագրերի գումարները փոխանցել է կատարողներին: Կատարողներին փաստացի վճարվել են պայմանագրերի գումարների 100 տոկոսի չափով կանխավճարներ, որը նախատեսված չէր մրցույթի հրավերով և կնքված պայմանագրերով: Վերոնշյալ անհամապատասխանությունները հանգեցրել են Շիրակի մարզպետարանի հաշվետու ժամանակաշրջանի «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» ձև Հ-2 հաշվետվության խեղաթյուրման 531,018.2 հազ. դրամ գումարի չափով:

5. Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հաշվեքնությանը արձանագրվել են հետևյալ փաստերը.

Խեղաթյուրման օրինակ

Ըստ ուսումնական հաստատությունների և բյուջետային միջոցառումների պայմանագրային գումարների բաշխումը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից կատարվել է «Հանրակրթություն» ծրագրում տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր հանրակրթության միջոցառումների տեսակարար կշիռների համամասնությամբ: Բաշխման վերոնշյալ մեթոդաբանության կիրառման արդյունքում բյուջետային ծրագրերի միջոցառումներում ներառվել են գումարներ, որոնք չեն վերաբերվում տվյալ միջոցառմանը՝ ուսումնական հաստատությունների պայմանագրային գումարները նախատեսվել և սահմանվել են իրավական ակտերով սահմանված չափորոշիչներին անհամապատասխան: Մասնավորապես

- 73 և ավելի սովորող ունեցող տարրական, 163 և ավելի հիմնական, 208 և ավելի սովորող ունեցող միջնակարգ հանրակրթական դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի հաշվարկում պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևում լրացուցիչ գործակիցներ կիրառելիս ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հիմք չի ընդունվել ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանված չափը,
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից կատարված պայմանագրերի հաշվարկներում չեն պահպանվել բնակավայրերի ըստ բարձունքային նիշերի տարանջատման պահանջները,
- սննդի համար «Տարրական ընդհանուր հանրակրթություն» և «Նախադպրոցական կրթություն» միջոցառումների շրջանակներում հատկացվող գումարը բաշխվել է նաև մնացած բյուջետային միջոցառումներին,

- կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով հատկացվող լրացուցիչ ֆինանսական միջոցների գումարները նախատեսվել են բոլոր դպրոցների համար կատարված հաշվարկներում,

Արդյունքում, «Հանրակրթություն» ծրագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի ուսումնական հաստատություններին պետական բյուջեից 564,403.8 հազ. դրամի չափով ավելի գումար է նախատեսվել և հատկացվել, ինչը հանգեցրել է հաշվեքննության օբյեկտի հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության խեղաթյուրմանը:

6. ՀՀ ներքին գործերի նախարարության սեյսմիկ պաշտպանության գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

- Սեյսմիկ ռիսկի նվազեցումը համապարփակ ռազմավարական մոտեցմամբ չի իրականացվել:
- Բազմաբնակարան բնակելի շենքերի համապատասխանեցումը գործող սեյսմիկ նորմերի պահանջներին հրատապ լուծում պահանջող խնդիր է, քանի որ 19,157 միավոր բազմաբնակարան շենքերի մոտ 83%-ը (15,825 միավորը) կառուցվել է մինչև ՀՀ-ում սեյսմիկ վտանգի և նորմերի վերանայումը:
- Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների խոցելիության գնահատման ու նվազեցման ծրագիր չի հաստատվել և չի իրականացվել: Արդյունքում, առկա չէ սեյսմիկ խոցելիության գնահատման վերաբերյալ տվյալների միասնական շտեմարան:
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների ավարտական ակտերի համաձայնեցումը լիազոր մարմնի մասնակցությամբ չի իրականացվել:
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարություն չեն ներկայացվել սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման առաջարկություններ:
- Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության՝ մասնավորապես սեյսմիկ ոլորտում մոնիթորինգի իրականացման կարգ առկա չէ:

➤ ՀՀ Նախագահի 2010 թվականի օգոստոսի 28-ի թիվ ՆԿ-140-Ն կարգադրությամբ ՀՀ սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիրը չի հաստատվել:

➤ Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Լիազոր մարմնի ղեկավարը «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում Ազգային ժողովի նիստում 2021-2022թթ. հաղորդմամբ հանդես չի եկել:

➤ Առկա չէ «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Լիազոր մարմնի կողմից մշակված Պետական ծրագրի իրականացման, համակարգման և կատարման նկատմամբ հսկողության կարգ:

➤ «Երևան քաղաքի երկրաշարժի վաղ ազդարարման համակարգի ստեղծում» ծրագիրը հաստատելու մասին» նախագիծը հաստատված չէ: Չի մշակվել ՀՀ տարածքում ուժեղ երկրաշարժի վաղ ահազանգման համակարգի նախագիծը:

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), ԱՍՀՆ միասնական սոցիալական ծառայության զբաղվածության ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

➤ Զբաղվածության ծրագրով իրագործվող միջոցառումները ունեն աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի վրա սահմանափակ ազդեցություն:

➤ Զբաղվածության ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների կանխատեսումային միջանկյալ արդյունքներով չի հիմնավորվում գործազրկության կրճատման և զբաղվածության աճի թիրախավորված ցուցանիշի, ինչպես նաև աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության հասնելու՝ չափելի արդյունքի վրա ազդեցությունը:

8. ՀՀ էկոնոմիկայի նախարարության չափագիտության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

➤ ՀՀ չափագիտության բնագավառում իրականացվող միջոցառումների համար տրամաբանորեն համախմբված բյուջետային ծրագիր առկա չէ:

➤ 12 էտալոններից կազմավորվել և ճանաչվել են 7-ը:

➤ Տրամաչափարկման 2 լաբորատորիաները միջազգային ճանաչում չեն ստացել:

- Արդյունաբերական էտալոնային կենտրոն հիմնված չէ:
- 12 ազգային էտալոնների պահապաններից նշանակված են 7-ը:
- Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանն (ՕՉՄԿ) անդամակցության գործընթացն ավարտված չէ:
- Կշիռների և չափերի միջազգային կոմիտե (ԿՉՄԿ) չափումների և էտալոնների MRA-ին միացման գործընթացն ավարտված չէ:
- Եվրասիական ազգային չափագիտական կառույցների համագործակցության տարածաշրջանային կազմակերպության (COOMET) ծրագրերի միջոցով էտալոնների համեմատություններին մասնակցության գործընթացն ավարտված չէ:

9. ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտադրական հնարավորությունների արդիականացման և նոր տեխնոլոգիաների ներմուծման խթանման նպատակով մատչելի պայմաններով վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը .

- Նախարարությունը չի տրամադրել գործընթացի շահառու տնտեսավարող սուբյեկտների ցանկը, ֆինանսական կազմակերպությունների (այսուհետ՝ ՖԿ) ամսական հաշվետվությունները, գործընթացի շրջանակում տրամադրված վարկի/լիզինգի նպատակայնության և պայմաններին համապատասխանության վերաբերյալ հավաստիացման մոնիթորինգային հաշվետվությունները՝ պատճառաբանելով, որ դրանք հանդիսանում են բանկային գաղտնիք:
- Նախարարության և ՖԿ-ների միջև 2022 թվականին տարբեր ամիսներին կնքված պայմանագրերի 6.4 կետերով սահմանված՝ «Ֆինանսական կազմակերպությունը պարտավորվում է վարկառուների/լիզինգառուների հետ կնքվող վարկային/լիզինգի պայմանագրերում նախատեսել դրույթ, որով վերջիններս Նախարարությանը տալիս են գրավոր թույլտվություն իրենց վերաբերյալ ցանկացած տեղեկություն, ներառյալ առևտրային, բանկային և այլ օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել Դատախազությանը, Պետական վերահսկողական ծառայությանը, Հաշվեքննիչ պալատին, Ֆինանսների նախարարությանը՝ վերջիններիս լիազորությունների շրջանակներում համապատասխան տեղեկություններ տրամադրելու պահանջ ներկայացվելու դեպքում» դրույթը մի քանի ամիս հետո կնքված համաձայնագրերով հանվել է, իսկ նոր կնքված պայմանագրերում՝ չի ներառվել:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» N° 355-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) 2-րդ կետով սահմանվել է՝ «Հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարին և առաջարկել ՀՀ

կենտրոնական բանկի նախագահին՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ այնտեղ ամրագրելով նաև գործընթացի հրապարակային և թափանցիկ իրականացման մեխանիզմներ, այդ թվում՝ օժանդակությունից օգտվող տնտեսավարողների ցանկի հրապարակումը»:

- Հետագայում Որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում չի ապահովվել սահմանված օժանդակության գործիքների կիրառման կարգը, հրապարակային և թափանցիկ իրականացման մեխանիզմները, չի հրապարակվել օժանդակությունից օգտվող տնտեսավարողների ցանկը:
- Նախարարությունը հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում չի ապահովել ներքին աուդիտի գործառույթի իրականացումը:
- Նախարարությունը չի տիրապետում շահառու տնտեսավարող սուբյեկտների տարեկան իրացման շրջանառության, տարեկան արտադրանքի ծավալի, աշխատակիցների փաստացի աշխատած ընդհանուր ժամաքանակի վերաբերյալ տեղեկատվությանը:
- Նախարարությունում մշակված չեն Գործընթացի իրականացման արդյունքում ակնկալվող նպատակային (թիրախային) միջնաժամկետ և վերջնարդյունքային ցուցանիշները:

10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կոշտ թափոնների կառավարման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

Նպատակային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակներ

- Կոշտ կենցաղային թափոնների կառավարման պետական քաղաքականությունը մշակելու և իրականացնելու նպատակով ոլորտը կարգավորող իրավական դաշտի ձևավորումը սկսվել է տարիներ առաջ ու վերջին տարիներին հիմնարար փոփոխություններ և լրացումներ են կատարվել առկա իրավակարգավորումներում: Այնուհանդերձ, չնայած կարգավորումներում նշանակալի փոփոխություններին, դրանք դեռևս ամբողջականացված չեն:
- Չեն պահպանվում աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի պետական քաղաքականության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են աղբի տեսակավորման, վերաօգտագործման, վերամշակման և օգտահանման գործողությունների կիրառումը, աղբավայրերում տեղադրվող աղբի քանակի նվազեցումը և շրջանաձև տնտեսության խթանումը:

➤ Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման գործընթացը պատշաճ կարգով չի իրականացվում:

Ծախսային արդյունավետության սկզբունքի չպահպանման օրինակ

➤ Բյուջետավորման փուլում իրականացվող պլանավորման աշխատանքները բարելավման կարիք ունեն: Վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսված միջոցառումները ժամանակին և ամբողջ ծավալով չեն իրականացվել, ինչը հանգեցրել է լրացուցիչ ֆինանսական միջոցների օգտագործման:

11. Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

➤ Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում Ծրագրի բյուջետային անձնագիրը մշակված չի եղել, Ծրագրի նպատակները նորմատիվ-իրավական փաստաթղթերում ամբողջապես նկարագրված և սահմանված չեն եղել: Սահմանված արդյունքային ցուցանիշները ամբողջությամբ չեն բացահայտում ինչպես Ծրագրի նպատակի, այնպես էլ՝ արդյունքային ցուցանիշների միջև կապը,

➤ «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման համար ՀՀ պետական բյուջեից 2021-2022թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 11,050,670.7 հազ.դրամ և 12,169,081.8 հազար դրամ: Նախարարության կողմից շահառուների թվի, շահառու հանդիսանալու հանգամանքի, օրենսդրությամբ սահմանված ծառայությունների շրջանակի հասանելիության, յուրաքանչյուր ծառայության մասով շահառուների դիմելիության, ինչպես նաև միջոցառման շրջանակներում մատուցվող ծառայությունների գնագոյացման ստորև ներկայացվող պայմաններում հնարավորություն չի ընձեռնվել ձեռք բերել բավարար և անհրաժեշտ ապացույցներ՝ գնահատելու տվյալ միջացառման նպատակային, ծախսարդյունավետ և տնտեսող լինելը,

➤ Ծրագրի շրջանակներում կիրառված գների (ՀՀ առողջապահության նախարարի 18.12.2020թ. թիվ 4484-Լ հրաման) հաշվարկման համար հիմք հանդիսացող մեթոդաբանության առկայությունը կամ գործածումը չի հիմնավորվել: Թեև, նախարարի հրամանով, հաշվետու ժամանակահատվածում սահմանվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գնագոյացման հանձնաժողովի անհատական կազմը, հանձնաժողովի աշխատակարգը, այդուհանդերձ, Նախարարության կողմից չի տրամադրվել վերոնշյալ

հանձնաժողովի գործունեության արձանագրմանն առնչվող որևէ իրավական հիմք կամ տվյալ: Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Առողջապահության նախարարի հրամանով սահմանվել և կիրառվել են ծառայությունների մատուցման գներ՝ հիմքում չունենալով որևէ մեթոդաբանություն և դրա հիման վրա կատարված հաշվարկներ:

12. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) Էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ փաստերը.

➤ ՀՀ-ում առկա են օրենսդրական անհրաժեշտ կարգավորումներ, ինչպես նաև բավարար լիազորություններ և գործիքակազմ՝ էլեկտրոնային առևտրի և ծառայությունների մատուցման հարկումն արդյունավետ և դինամիկ իրականացնելու համար:

➤ ՊԵԿ պաշտոնական կայքում առկա է առանձին բաժին՝ էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտների կողմից ԱԱՀ-ի վճարման համակարգ (e-VAT), որի միջոցով ՀՀ-ում ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունները հնարավորություն ունեն հաշվառվելու հարկային մարմնում, ներկայացնելու օրենսդրությամբ սահմանված հաշվարկ-հաշվետվություններ, վճարելու մատուցված ծառայությունից ձևավորված ԱԱՀ ն:

➤ Էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտների թիվն ավելացել է, ինչը հանգեցրել է նաև գանձված հարկային եկամուտների աճին, մասնավորապես՝ էլեկտրոնային ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտների կողմից 2021 թվականին վճարվել է 312,831,241 դրամ, 2022 թվականին՝ 1,133,513,524 դրամ, իսկ 2023 թվականի 01.11.2023թ. դրությամբ՝ 2,485,900,611 ՀՀ դրամ ԱԱՀ:

➤ Այլ գերատեսչությունների հետ առկա չէ համագործակցության բավարար մակարդակ: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 30 ի N 2177-Լ և ՀՀ վարչապետի 2022 թվականի փետրվարի 4 ի N153-Ա որոշումների՝ ապրանքների արտաքին էլեկտրոնային առևտրի ոլորտի փորձնական ծրագրի իրականացման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից լիարժեք չեն իրականացվել ծրագրով նախատեսված միջոցառումները:

ՄԱՍ 3. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌՒԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատն անցկացրել է 19 նիստ, որոնցից 7-ն՝ արտահերթ: Հաշվեքննիչ պալատի բոլոր նիստերի օրակարգերն օրենքով սահմանված կարգով նիստից երկու օր առաջ ուղարկվել են Ազգային ժողով և Կառավարություն: Նույն ժամանակահատվածում Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունվել է 185 որոշում, որից՝ 128-ն առնչվում է հաշվեքննության գործընթացին, 22-ը՝ Հաշվեքննիչ պալատի գործունեության մեթոդական և իրավական ապահովմանը, 14-ը՝ անձնակազմի կառավարման հարցերին, 21-ը՝ ֆինանսատնտեսական գործունեությանը:

Հաշվեքննիչ պալատի նիստերում կայացված որոշումները (բացառությամբ անհատական կամ գաղտնիք պարունակող իրավական ակտերի, հաշվեքննության և ստուգման առաջադրանքների) սահմանված կարգով հրապարակվել են Հաշվեքննիչ պալատի www.armsai.am պաշտոնական կայքում:

Կայքում հրապարակված բովանդակությունը համառոտ ներկայացված է ստորև.

2023թ. պաշտոնական կայքում հրապարակված նյութերի վերաբերյալ	
Բովանդակություն	Հրապարակումների թիվ
Հաշվեքննիչ պալատի որոշումներ	106
Հաշվեքննիչ պալատի նիստերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում	11
Միջազգային հարթակներ և համագործակցություն	11
Թափուր աշխատատեղերի/փորձագետների ներգրավման հայտարարություններ	11
Այլ տեղեկատվություն	4

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցները լուսաբանել են Հաշվեքննիչ պալատի մամուլի հաղորդագրությունները և հաշվեքննության արդյունքները: Հաշվեքննիչ պալատը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հիշատակվել է ավելի քան 1,940 անգամ³:

³ Աղբյուրը՝ Rumorsmonitoring.com

Հաշվեքննիչ պալատի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2023 թվականին վերանայվել է Հաշվեքննիչ պալատի կառուցվածքը և պաշտոնների անվանացանկը:

Արդյունքում, կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 10 հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների փոխարեն հաշվեքննությունները կազմակերպվել են 6 ստորաբաժանումների միջոցով և ձևավորվել է Կատարողականի հաշվեքննության վարչություն, որպեսզի հաշվեքննությունների իրականացումը կազմակերպվի՝ դրանց տեսակներով պայմանավորված մասնագիտացված ստորաբաժանումների միջոցով:

2023 թվականի ընթացքում Հաշվեքննիչ պալատի պաշտոնների անվանացանկը համապատասխանեցվել է Հաշվեքննիչ պալատի մասին օրենքով սահմանված և քաղաքական ծառայության կարգավորումների տրամաբանությանը, ինչը հանգեցրել է Հաշվեքննիչ պալատի վարչությունների խորհրդականների պաշտոնները քաղաքական ծառայության պաշտոնների վերափոխման:

Բարեփոխումների ընթացքով պայմանավորված 2023 թվականի ընթացքում Հաշվեքննիչ պալատի հաստիքների առավելագույնը 155 միավորի պայմաններում համալրված հաստիքների տարեկան միջին ցուցանիշը կազմել է 105 հաստիք:

Հաշվեքննիչ պալատի մարդկային ռեսուրսների վերաբերյալ մի շարք տվյալներ ներկայացված են ստորև բերված աղյուսակներում.

Աշխատակիցների տարիքային խմբերը

Աշխատակիցների տարիքային խմբեր	Քանակ	Տոկոս
30-ից երիտասարդ	3	3.1%
30-40 տարեկան	16	16.7%
40-50 տարեկան	34	35.4%
50-60 տարեկան	28	29.2%
60-ից մեծ	15	15.6%
15 տարի և ավելի պետական ծառայության աշխատանքային ստաժ ունեցողներ	60	62.5%
Միջին տարիք		48

Սեռային խմբերը

Սեռ	%
Իգական	25
Արական	75

Աշխատակիցների շարժը

Աշխատակիցների ընդհանուր շարժ (ընդամենը)	52
պետական ծառայության հաստիքներում աշխատակիցների շարժ	21
<i>պետական ծառայությունից ազատված</i>	<i>18</i>
<i>պետական ծառայության ընդունված</i>	<i>3</i>
պայմանագրային աշխատակիցների շարժ	31

Աշխատակիցների որակավորման բարձրացման շրջանակը⁴

Վերապատրաստման ծրագրեր	Մասնակիցներ
Պետական ծառայության /քաղաքացիական ծառայության վերապատրաստումներ, ք. Երևան	16
Կատարողականի հաշվեքննության ստանդարտների հիման վրա աշխատակիցների վերապատրաստում, ք. Երևան (Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի աջակցությամբ)	24
Ֆինանսական հաշվեքննություն թեմայով վերապատրաստում, ք. Երևան (ԱՄՆ բարձրագույն հաշվեքննիչ մարմնի աուդիտի գերազանցության կենտրոնի - GAO CAE աջակցությամբ)	25
Աուդիտորի որակավորման դասընթաց, ք. Երևան. «Ֆինանսական տեղեկատվություն կառավարման համար» (UNDP MAP ծրագրի աջակցությամբ)	25
Աուդիտորի որակավորման դասընթաց, ք. Երևան. «ՀՀ հարկային օրենսգիրք» (UNDP MAP ծրագրի աջակցությամբ)	25
«ՄԱԿ 2030 օրակարգ - Կայուն զարգացման նպատակների շրջանակ և բյուջետավորում» թեմայով վերապատրաստում, ք. Երևան (UNDP MAP ծրագրի աջակցությամբ)	10

2023 թվականին Հաշվեքննիչ պալատի պահպանման նպատակով օգտագործվել է շուրջ 1,019.1 մլն դրամ, որը կազմում է ճշտված պլանի 94.7 %-ը: Հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 19.3 մլն դրամն օգտագործվել է 23%-ով: Հաշվեքննիչ պալատի տեխնիկական հագեցվածության բարելավում ծրագրի գծով նախատեսված 2.8 մլն դրամն օգտագործվել է 73.9%-ով: Սոցիալական փաթեթների ապահովման նպատակով օգտագործվել է 6.96 մլն դրամ՝ կազմելով պլանի 65.3 %-ը:


Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ 2023 թվականին Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են արտաքին աուդիտի՝ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մրցութային ընթացակարգով ընտրված արտաքին

⁴ Միջազգային գործընկերների համագործակցությամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ մանրամասները ներկայացված են «Միջազգային համագործակցություն» բաժնում

աուդիտորական կազմակերպության կողմից: Վերջինս տրամադրել է հետևյալ աուդիտորական կարծիքը.


Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են համաձայն ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի:

Սույն աուդիտորական եզրակացությունը հրապարակված է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացություն	Հղում
	

2023 թվականի ֆինանսական հաշվետվությունները նույն ընթացակարգով 2024 թվականին կենթարկվեն արտաքին աուդիտի, որի ավարտվելուն պես Հաշվեքննիչ պալատը պաշտոնական կայքում կհրապարակի աուդիտի եզրակացությունը:

Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանության հիման վրա հաշվետու տարում մշակվել և Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվել են Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի գործունեության ծրագիրը, ինչպես նաև գործունեության ծրագրի ծրագրային կետերի ընտրության հիմնավորումը, որոնք հրապարակված են Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2024 թվականի գործունեության ծրագիրը և ծրագրային կետերի ընտրության հիմնավորումը	Հղում
	

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրով ամրագրված 4 հիմնական ռազմավարական նպատակներն էին.

1. իրավական դաշտի բարելավում,
2. հաշվեքննության ազդեցության բարելավում,
3. մասնագիտական կարողության և հաշվեքննության հմտությունների արդիականացում,

4. հաղորդակցման և համագործակցության ուղիների հզորացում:

Ամփոփելով ռազմավարական շրջափուլի ընթացքում իրագործված միջոցառումները, կարելի է արձանագրել, որ Հաշվեքննիչ պալատն իրագործել է այն առանցքային միջոցառումները, որոնք վերաբերում են պալատի կարողությունների համար զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես.

- Մասնագիտական աջակցություն է տրամադրվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում բարելավումների նախաձեռնությանը:
- Իրականացված են պալատի առանցքային խնդիրներին առնչվող՝ ֆինանսական, համապատասխանության և կատարողականի հաշվեքննությունների մեթոդաբանությունների ներդրման և հաշվեքննողների համապատասխան կարողությունների զարգացման միջոցառումների զգալի մասը:
- Հաշվեքննիչ պալատում գործում են Հաշվեքննիչ պալատի անդամների և հաշվեքննողների էթիկայի կանոններ և դրա շարունակական մշտադիտարկման համակարգ:
- Հաշվեքննիչ պալատը հաստատել է հաղորդակցության ռազմավարություն, որը ոչ միայն նպատակ ունի բարելավել արտաքին շահառուների հետ հաղորդակցությունը, այլև ձևավորել արդյունավետ ներքին հաղորդակցության միջավայր և բարձրացնել հաշվեքննության արդյունքի որակն ու պալատի գործունեության թափանցիկությունը:

Հաշվի առնելով, որ Հաշվեքննիչ պալատի օրենսդրական բարելավումների փաթեթի ընդունումը⁵ կձևավորի նոր ռազմավարական միջավայր՝ նոր հնարավորություններով և մարտահրավերներով, Հաշվեքննիչ պալատի 2023թ. դեկտեմբերի 26-ի թիվ 173-Լ որոշմամբ ռազմավարական զարգացման ծրագիրը և դրա իրականացման պլանը երկարաձգվել է երկու տարով: Ռազմավարական զարգացման վերանայված ծրագիրը մշակվել է՝ ԵՄ/ՏՀԶԿ համատեղ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագիտական աջակցությամբ: 2024-2025թթ. համար Հաշվեքննիչ պալատի առաքելությունը, տեսլականը, արժեքները, սկզբունքները և դրանց հիման վրա սահմանված ռազմավարական նպատակները փոփոխության չեն ենթարկվել: Մինչույն ժամանակ, 2024-2025թթ. միջոցառումների իրականացման պլանով 11 ռազմավարական ուղղություններով սահմանվել է 18 միջոցառում:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ազգային ժողովի պատգամավորների օրենսդրական նախաձեռնությամբ «Հաշվեքննիչ պալատի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և

⁵ Մանրամասները ներկայացված են «Օրենսդրական դաշտի բարելավում» բաժնում

լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը 2023 թվականի նոյեմբերի 27-ին ընդգրկվել են Ազգային ժողովի նիստերի օրակարգում: 2024 թվականի մայիսի 22-ին Ազգային ժողովն ընդունել է շրջանառվող օրենքների նախագծերը: Օրենքների ուժի մեջ մտնելուն պես իրավական նախադրյալներ կստեղծվեն ՀՀ-ում արտաքին պետական հաշվեքննության ոլորտի՝ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) կողմից հաստատված ստանդարտներին համապատասխանության, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների և արտաքին գործընկերների INTOSAI ստանդարտների նկատմամբ գնահատման զեկույցների առաջարկությունների իրականացման, ինչպես նաև ոլորտին վերաբերելի հիմնարար փաստաթղթերով առաջարկվող լուծումների ներդրման համար:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննիչ պալատն առաջին անգամ հաստատել է միջնաժամկետ հորիզոնում (2024-2026թթ.) արտաքին պետական հաշվեքննության առաջնահերթությունները⁶, որոնք բխում են հետևյալ տեսլականի կենսագործման անհրաժեշտությունից.

«Մարդակենտրոն հաշվեքննությունների միջոցով նպաստել մարդու պահանջմունքներն արդյունավետորեն հասցեագրող հանրային կառավարմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ պեպոլոգիայի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը» :

Առաջադրվել են տեսլականից բխող՝ հաշվեքննության հետևյալ 7 հավասարազոր առաջնահերթությունները.

1. Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահություն.
2. Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթություն.
3. Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայր.
4. Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատություն.
5. Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացում.
6. Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացում.
7. Ներդաշնակ զարգացող համայնքներ:

Հաշվեքննության յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակներում ներկայացված են դրան վերաբերելի նշանակալի միտումներն ու մարտահրավերները, ինչպես նաև վերջիններս հասցեագրող հաշվեքննության նախատեսվող ուղղությունները, որոնք համահունչ են Կառավարության ծրագրով, ՄԺԾԾ-ով և ոլորտային ռազմավարական

⁶ Հաշվեքննիչ պալատի 2023թ. նոյեմբերի 30-ի թիվ 164-Լ որոշում

փաստաթղթերով արձանագրված հիմնախնդիրների և հանրային քաղաքականության առաջնահերթությունների շրջանակին:

Հաշվի առնելով առաջնահերթությունների բազմազանությունը՝ Հաշվեքննիչ պալատն առանձնացրել է այն հիմնական ռիսկերը, որոնց արդյունքում անհրաժեշտություն կարող է առաջանալ վերանայելու նախատեսված ուղղությունները: Այդպիսիք են՝ հանրային հատվածի փոփոխվող միջավայրը, իրավական ռիսկերը, որակյալ մարդկային ռեսուրսներով համալրվածությունը, ֆինանսական ռիսկերը և ֆորս-մաժորային իրավիճակները:

Վերոնշյալ ուղղություններով հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը կնպաստի հանրային ունեցվածքի կառավարումը բարելավելուն՝ պետական ոլորտային քաղաքականությունների մշակման և իրականացման վերաբերյալ Ազգային ժողովին, Կառավարությանը և հանրությանը մասնագիտական, անկողմնակալ ու ժամանակին կարծիքներ և առաջարկներ տրամադրելու ճանապարհով:

Հատկանշական է, որ Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության 2024-2026 թվականների առաջնահերթությունների փաստաթղթի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում մասնագիտական հոդված է տպագրվել INTOSAI պաշտոնական ամսագրում⁷:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատի բարեփոխումների շրջանակում տեղի է ունեցել միջազգային համագործակցության համակարգման առցանց հանդիպում Եվրոպական միության Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության համատեղ SIGMA ծրագրի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ բարձրագույն հաշվեքննիչ մարմնի (GAO), Շվեդիայի աուդիտի ազգային գրասենյակի, ՀՀ-ում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) գրասենյակի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Հաշվեքննիչ պալատի 2020-2023 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի և միջոցառումների պլանի իրականացման մշտադիտարկման արդյունքները, մոտ ապագայում նախատեսվելիք միջոցառումները, ինչպես նաև քննարկվել են նոր ռազմավարական պլանավորման մեկնարկին առնչվող մի շարք հարցեր:

Հաշվեքննիչ պալատի, GAO-ի և USAID համատեղ ծրագրի շրջանակներում Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Զանջուղազյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվել է ԱՄՆ ք. Վաշինգտոնում: Այցի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Զանջուղազյանը հանդիպել է ԱՄՆ գերագույն աուդիտոր

⁷ <https://intosaijournal.org/audit-chamber-of-armenia-unveils-audit-priorities-for-2024-2026/>

Ջին Դոդարոյի հետ: Կողմերը իրենց գոհունակությունն են հայտնել համագործակցության եռամյա ծրագրի արձանագրած արդյունքների կապակցությամբ՝ պատրաստակամություն հայտնելով ապահովելու Հաշվեքննիչ պալատի կարողությունների զարգացման ծրագրի շարունակականությունը: Այցի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահը հանդիպումներ է ունցել նաև USAID ֆինանսական տնօրենի, USAID հակակոռուպցիոն աշխատանքային խմբի և գլխավոր վերահսկողության ներկայացուցիչների, ԱՄՆ Կոնգրեսի վերին պալատի (սենատի) ներքին անվտանգության և կառավարության գործերի, ինչպես նաև ԱՄՆ ներկայացուցիչների պալատի վերահսկողության և հաշվետվողականության հանձնաժողովների աշխատակազմերի ներկայացուցիչների հետ:

Վերոնշյալ համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում GAO աուդիտի գերազանցության կենտրոնի փորձագետները պալատի հաշվեքննողների համար ք. Երևանում իրականացրել են «Ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանությունը» թեմայով վերապատրաստման ծրագիր, ինչպես նաև, փորձագետների և պալատի ղեկավարության մասնակցությամբ, «Ֆինանսական հաշվեքննության կարողությունների զարգացման մարտահրավերների» թեմայով աշխատաժողով:

Հաշվետու ժամանակահատվածում Շվեդիայի և Հայաստանի բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համագործակցության ծրագրի կառավարման խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվել է Շվեդիայի Թագավորության ք. Ստոկհոլմում: Այցի ընթացքում Ատոմ Զանջուլազյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունցել Շվեդիայի Թագավորության գլխավոր աուդիտոր Հելենա Լինդբերգի հետ, որի ընթացքում կողմերն ամփոփել են 2020-2023 թվականների համատեղ կատարված աշխատանքները: Մասնավորապես, կողմերն արձանագրել են, որ մշակված և ներդրված է կատարողականի հաշվեքննության մեթոդաբանությունը, իրականացվել են մի շարք առցանց և տեղում վերապատրաստման ծրագրեր, որի արդյունքում նախադրյալներ են ստեղծված Հաշվեքննիչ պալատի կառուցվածքում կատարողականի հաշվեքննության վարչության կայացման համար:

Վերոնշյալ համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի փորձագետները, UNDP «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի աջակցությամբ, ք. Երևանում անցկացրել են «Կատարողականի հաշվեքննության իրականացման և հաշվետվողականության փուլեր» և «Հաշվեքննության արդյունքների հաղորդակցում» թեմաներով, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի ղեկավար կազմի համար «Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների հաղորդակցության շրջանակը» թեմաներով աշխատաժողովներ:

Հաշվետու ժամանակահատվածում Հյուսիսային Մակեդոնիայի պետական աուդիտի գրասենյակի և պետական եկամուտների կոմիտեի համատեղ պատվիրակությունը

հյուրընկալվել էր ք.Երևանում, որի շրջանակներում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության վերաբերյալ հարցեր: Կողմերը ձեռք են բերել պայմանավորվածություն փորձի և գիտելիքների փոխանակման նպատակով համատեղ ծրագրի մշակման ուղղությամբ, որին տեխնիկական աջակցություն կցուցաբերի UNDP MAP ծրագիրը:

2023 թվականի ընթացքում Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունները մասնակցել են հետևյալ միջոցառումներին.

- Հաշվեքննիչ պալատի նախագահի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Միացյալ Թագավորության ք. Լոնդոնում կայացած INTOSAI զարգացման նախաձեռնության (IDI) կողմից կազմակերպված բարձրագույն աուդիտի մարմինների աուդիտորների պրոֆեսիոնալիզացման գլոբալ գագաթնաժողովին, որի ընթացքում Հաշվեքննիչ պալատի նախագահը երկկողմ հանդիպում է ունեցել INTOSAI նախագահ՝ Բրազիլիայի աուդիտի դատարանի նախագահի հետ: Հանդիպման ընթացքում INTOSAI նախագահը բարձր է գնահատել Հաշվեքննիչ պալատի ձգտումը դառնալու INTOSAI ստանդարտներին համահունչ գործող բարձրագույն աուդիտի մարմին՝ հաստատելով իր պատրաստակամությունն աջակցելու երկու երկրների բարձրագույն աուդիտի մարմինների միջև համագործակցության խորացմանը: Ձեռք է բերվել պայմանավորվածություն INTOSAI-ի միջազգային միջոցառումներից մեկը Հայաստանում կազմակերպելու վերաբերյալ:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ անդամ պետությունների աուդիտի բարձրագույն մարմինների ղեկավարների խորհրդի 20-րդ նիստին՝ առցանց ձևաչափով:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակը մասնակցել է Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների եվրոպական կազմակերպության (EUROSAI) բնապահպանական աուդիտի աշխատանքային խմբի Չեխիայի Հանրապետության ք. Պրագայում կայացած ամենամյա նիստին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը ՀՀ ԱԺ պաշտոնական պատվիրակության կազմում մասնակցել է գերմանական փորձի կիրառման հնարավորությունների ուսումնասիրման նպատակով Գերմանիայի Դաշնության ք. Դրեզդեն ճանաչողական այցին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակը մասնակցել է Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների ասիական կազմակերպության (ASOSAI) Ինդոնեզիայի ք. Բալիում կազմակերպված «Հանրության սպասելիքները բարձրագույն հաշվեքննիչ մարմիններից» թեմայով վերապատրաստման ծրագրին:

- Հաշվեքննիչ պալատի պատվիրակը մասնակցել է Չեխիայի Հանրապետության ք. Պրագայում INTOSAI IDI կողմից կազմակերպված «Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների անկախության ապահովման» աշխատաժողովին:
- Հաշվեքննիչ պալատի պատվիրակությունը Լեհաստանի Հանրապետության ք. Վարշավայում մասնակցել է «EUROSAI աուդիտի մեթոդաբանության» թեմայով միջազգային աշխատաժողովին:

ԵԱՏՄ ՀԱՄԱՏԵՂ ՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման վերաբերյալ

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելվածի արձանագրության 53-րդ կետի դրույթով, «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ հսկողական միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրով և բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հաստատված ծրագրով՝ ԵԱՏՄ բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմիններում (գանձապետարաններում) վերահսկողություն է իրականացվել 2022 թվականին ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման, ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեների փոխանցման ճշտության նկատմամբ: 2023 թվականի համատեղ հսկողական միջոցառման պատասխանատուն Ռուսաստանի Դաշնության բարձրագույն հաշվեքննիչ մարմինն էր:

Վերահսկողական միջոցառումների ընթացքում յուրաքանչյուր վերահսկողության օբյեկտում ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների կողմից հսկողական միջոցառումների վերաբերյալ կազմվել են համապատասխան ակտեր, որոնց ամփոփումից հետո կազմվել է ամփոփ հաշվետվություն, որը հաստատվել է 2023 թվականի նոյեմբերի 28-ին ք. Մոսկվայում կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինների համատեղ կոլեգիայի նիստում:

ԵԱՏՄ մարմիններում (Եվրասիական տնտեսական հանձնաժողով և Եվրասիական միության դատարան) համատեղ արտաքին աուդիտ իրականացնելու մասին

Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 22-րդ հոդվածով, Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 33 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ մարմիններում արտաքին աուդիտ իրականացնելու մասին հիմնադրույթով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն հաշվեքննիչ մարմինները Միության բյուջեի

միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման, Միության գույքի և այլ ակտիվների արդյունավետ օգտագործման նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և Եվրասիական տնտեսական միության դատարանում 2023 թվականին իրականացրել են համատեղ արտաքին աուդիտ:

Համաձայն Հիմնադրույթի 36-րդ կետի՝ արտաքին աուդիտի կազմակերպման մասով գործունեությունը ռոտացիոն կարգով համակարգվում է պետական ֆինանսական վերահսկողության պատասխանատու բարձրագույն մարմնի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում: 2023 թվականի համատեղ աուդիտի միջոցառումների պատասխանատու մարմինը Ղազախստանի բարձրագույն հաշվեքննիչ մարմինն էր:

Համատեղ աուդիտի միջոցառումների ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովում և ԵԱՏՄ դատարանում Եվրասիական տնտեսական միության 2022 թվականի բյուջեի կատարման հետագա աուդիտի, 2023 թվականի առաջին կիսամյակում ընթացիկ աուդիտի և 2024 թվականի ԵԱՏՄ բյուջեի ձևավորման նախնական աուդիտի իրականացման արդյունքներով կազմվել են հաշվետվություններ, որոնք ներկայացվել են Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի հաստատման:

Հաշվեքննիչ պալատի 2023թ. գործունեության ծրագրի ուժը կորցրած հաշվեքննությունների ցանկ⁸

1. Առողջապահության նախարարություն. ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովման կատարողականի հաշվեքննություն (ՀՊ 2023թ. հուլիսի 27-ի թիվ 110–Լ որոշում)

Քաղվածք տեղեկանք-հիմնավորումից

Հաշվեքննության պլանավորման փուլում պարզվել է, որ բուժօժանայությունների գնագոյացման, այդ գործընթացի իրավամեթոդական հիմնավորումների բացակայության, կլինիկական ուղեցույցների հաստատված չլինելու, հաշվառմանը, ինչպես նաև տեղեկատվության հասանելիությանը վերաբերելի խնդիրների պայմաններում էապես սահմանափակված է հաշվեքննության առարկայի գնահատման հնարավորությունը: Որպես հետևանք բացակայել է հաշվեքննության գործընթացի ծախսային և նպատակային արդյունավետությունը կամ այլ կերպ ասած՝ լրացուցիչ ռեսուրսի ներդրման անհրաժեշտությունը: Բացի այդ, թեման առաջին անգամ տեղ է գտել Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության ծրագրում, ուստի 2023 թվականին սույն հաշվեքննության իրականացումը չի համապատասխանում «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ ժամանակին տեղեկատվություն ներկայացնելու պահանջին:

2. Վարչապետի աշխատակազմ. կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) հասնելու պատրաստվածության կատարողականի հաշվեքննություն (ՀՊ 2023թ. հուլիսի 27-ի թիվ 110–Լ որոշում)

Քաղվածք տեղեկանք-հիմնավորումից

Հաշվեքննության պլանավորման փուլում պարզվել է, որ ԿԶՆ-ներին հասնելու պատրաստվածության կատարողականի հաշվեքննության անցկացումն ուշացած է, իսկ ԿԶՆ-ների իրագործման կատարողականի հաշվեքննությունը՝ դեռևս վաղ: Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի փորձագետների հետ քննարկման արդյունքում արձանագրվել է, որ պետք է քննարկման առարկա դարձնել հաշվեքննությունը դադարեցնելու նպատակահարմարությունը, քանի որ նախանշված ծավալով և շրջանակով հաշվեքննության իրականացումն առարկայական ռիսկ է պարունակում հավելյալ արժեք ստեղծելու տեսակետից: Հաշվեքննության ենթակա մարմնի հետ քննարկումների շրջանակում, Հաշվեքննիչ պալատը ստացել է նաև ՀՀ կայուն զարգացման նպատակների խորհրդի առաջարկը՝ Հաշվեքննիչ պալատի ծրագրով ներկայումս նախատեսված «Կայուն զարգացման նպատակներին հասնելու պատրաստվածության» կատարողականի հաշվեքննության փոխարեն, միջնաժամկետ ժամանակահատվածում «Կայուն զարգացման նպատակներին հասնելու» կատարողականի հաշվեքննություն իրականացնելու ուղղությամբ:

⁸ Հիմքը՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետը

Համագործակցությունը ՀՀ գլխավոր դատախազության հետ⁹

Հ/Հ	Թեմա	Երբ է հրապարակվել/ տրամադրվել	Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	Ծանոթություն ¹⁰
ՀՀ հաշվեքննիչ պալատի հրապարակած և դատախազության պահանջով տրամադրված հաշվեքննությունների արդյունքների հիման վրա հարուցված վարույթներ				
1.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում՝ դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման վարկային և դրամաշնորհային ծրագրի նկատմամբ	10.10.2022թ.	01.01.2017-31.12.2019թթ.	10.01.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 204,010.4 հազ. դրամ:
2.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում՝ 2021թ. պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ	29.09.2022թ.	01.01.2021-31.12.2021թթ.	09.11.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 303,000.0 հազ. դրամ:
3.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում՝ 2021թ. պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ	29.09.2022թ.	01.01.2021-31.12.2021թթ.	11.01.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 36,087.0 հազ. դրամ:

⁹ Աղյուսակի տեղեկատվությունը չի ներառում պետական գաղտնիք պարունակող հաշվեքննությունների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև նախկինում նախաձեռնված քրեական վարույթները, որոնց շրջանակներում 2023 թվականին որոշումներ չեն կայացվել

¹⁰ Տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ գլխավոր դատախազություն

4.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեում 2021թ. պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ	29.09.2022թ.	01.01.2021-31.12.2021թթ.	09.01.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում:
5.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ	05.03.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	06.10.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 4,669.0 հազ. դրամ:
6.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ	05.03.2019թ.	01.01.2017-30.09.2018թթ.	03.04.2023 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ, գտնվում է նախաքննության փուլում: Պետությանը պատճառված վնասի չափը կազմում է 360.0 հազ. դրամ:
7.	ՀՀ ոստիկանության 2022 թվականի պետական բյուջեի երեք և վեց ամիսների կատարման նկատմամբ	27.07.2022թ.	01.01.2022-30.06.2022թթ.	24.11.2023 թվականին որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին:
8.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ	11.12.2019թ.	01.01.2018-31.12.2018թթ.	12.12.2023 թվականին որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին: